

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ-2020
10-րդ դասարան

№ 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 X 4 = 2 միավոր)

1. Քանի՞ զիրք է ընդգրկում հայերեն Աստվածաշունչը. *(0,5 միավոր)*
- 1) 48 3) 72
2) 75 4) 85
2. Ո՞ր գավառում էր գտնվում արքայից ազատված և Հայաստան վերադարձած սուրբ Սահակ Պարթև կաթողիկոսի նստավայրը. *(0,5 միավոր)*
- 1) Արագածոտն 3) Բագրևանդ
2) Շիրակ 4) Տարոն
3. ՀՀ տարածքում գործող թեմերից որի՞ առաջնորդանիստն է գտնվում վանական համալիրի (վանքի) տարածքում. *(0,5 միավոր)*
- 1) Սյունյաց 3) Գուգարաց
2) Արմավիրի 4) Կոտայքի
4. Վազգեն Ա. հայրապետը ՀՀ Ազգային հերոսի կոչման արժանացել և «Հայրենիք» շքանշանով պարգևատրվել է. *(0,5 միավոր)*
- 1) 1992 թ. մարտի 17-ին
2) 1994 թ. հունիսին
3) 1991 թ. հունիսի 17-ին
4) 1993 թ. սեպտեմբերի 8-ին

№ 5-8

Կառուցված պատասխանով առաջադրանքներ
(1 X 4 = 4 միավոր)

5. _____
կաթողիկոսն իր ժամանակի նշանավոր աստվածաբաններից էր, հեղինակել է բազմաթիվ գրքեր, որոնցից առավել հայտնին «Բարի մարդ և բարի քրիստոնյա» աշխատությունն է: (1 միավոր)
6. Հայոց կաթողիկոս _____
Պարսից շահից ստացած հրովարտակներով Մայր Աթոռն ազատել է հարկերից, հաստատել տվել Ամենայն Հայոց Կաթողիկոսության իրավունքները, ընդարձակել Ս. Էջմիածնի կալվածքները, գերությունից ազատել հազարավոր հայերի ու վրացիների: (1 միավոր)
7. Նշանավոր հոգևոր գործիչ _____
գտնում էր, որ «Եթե մեկը քեզանից խնդրում է, և տալիս ես, շնորհակալ եղիր Աստծուն, որովհետև դու ավելին շահեցիր, քան նա՝ խնդրողը»: (1 միավոր)
8. Ճանապարհին զինվորները բռնեցին _____
անունով մի մարդու, որը հանդից տուն էր վերադառնում և ստիպեցին նրան՝ Հիսուսին օգնելու համար բարձրացնել խաչափայտը: (1 միավոր)

№ 9-10

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 7 փաստից

9. Պատվանունը համապատասխանեցնել Հայոց կաթողիկոսի անվանը. (1 միավոր)

1. Ներսես Ե.
2. Վազգեն Ա.
3. Ս. Արիստակես Ա.
4. Գևորգ Զ.
5. Գևորգ Ե.
6. Ս. Ներսես Ա.
7. Մկրտիչ Ա.

- ա) «Սրտերի լուսավորիչ»
- բ) «Հայրենասեր»
- գ) «Վշտակիր»
- դ) «Երկրորդ Գրիգոր»
- ե) «Պաշտպան հայրենեաց»
- զ) «Շինարար»
- է) «Հոգևոր սուր»
- ը) «Հայոց Հայրիկ»

1	
2	
3	
4	
5	
6	
7	

10. Ուսումնագիտական կամ հոգևոր կենտրոնի անունը համապատասխանեցնել գործչի անվանը. (1 միավոր)

- 1) Մխիթար Գոշ
- 2) Ստեփանոս Օրբելյան
- 3) Դավիթ Քոբայրեցի
- 4) Գրիգոր Տուտեորդի
- 5) Եսայի Նչեցի
- 6) Հովհաննես Հերմոնեցի
- 7) Հովհաննես Է. Ջալալ

- ա) Գանձասար
- բ) Հաղպատ
- գ) Գլաձոր
- դ) Նարեկավանք
- ե) Սանահին
- զ) Նոր Գետիկ
- է) Տաթև
- ը) Նորավանք

1	
2	
3	
4	
5	
6	
7	

№ 11

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանք

11. Կաթողիկոսների անունները դասավորել ըստ գահակալման հաջորդականության. (1 միավոր)

- ա) Կիրակոս Ա. Վիրապեցի
- բ) Եղիազար Ա. Այնթափցի
- գ) Գրիգոր Թ. Մուսաբեկյանց
- դ) Գրիգոր Դ. Տղա
- ե) Հակոբ Դ. Ջուղայեցի
- զ) Նահապետ Ա. Եդեսացի
- է) Աղեքսանդր Ա. Ջուղայեցի

1	
2	
3	
4	
5	
6	
7	

№ 12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով

12. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցերին: (2 միավոր)

«Երկրում աճել ու բազմացել էին խաղաղությունը, պտղաբերությունը, առատությունը և գործի հաջողությունը և աստվածային պաշտամունքը...»:

1. Հայոց ո՞ր արքայի գահակալության ժամանակաշրջանն է վերոհիշյալ տողերով բնութագրել պատմիչը:

(1 միավոր)

2. Հայոց ո՞ր կաթողիկոսի հովվապետության ժամանակաշրջանն է վերոհիշյալ տողերով բնութագրել պատմիչը: (1 միավոր)

13. Կարդալ ստորև բերված տեքստը և պատասխանել հարցին: (1 միավոր)

«Բարին երբեք չի մահանում: Եթե մահանար, աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ոչ մի տեղ կյանք չէր լինի...»:

Ո՞վ է վերոհիշյալ խոսքերի հեղինակը:

№ 14-15

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ

14. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞ր անունը չի համապատասխանում շարքի կառուցման սկզբունքին: (0,5 x 2 = 1 միավոր)

14.1. Պարզև արք. Մարտիրոսյան, Գրիգոր քահանա Մարկոսյան, Կոմիտաս քահանա Սարգսյան, Հովհաննես քահանա Հովհաննիսյան, Վահան արեղա Դավթյան, Ռաֆիկ դպիր Խաչատրյան, Արմեն դպիր Մովսիսյան:

14.2. «Վեհափառի Ավետարան», «Վեհամոր Ավետարան», «Զեյթունի Ավետարան», «Սիսական նահանգի պատմություն», «Պատմություն Արծրունյաց տան»:

15. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (1 x 3 = 3 միավոր)
15.1. (1 միավոր)

ա. Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Եղիշե, Ս. Եզնիկ Կողբացի, Ս. Մովսես Խորենացի, Ս. Կորյուն, Ս. Դավիթ Ս. Անհաղթ, Ղազար Փարպեցի, Ս. Գրիգոր Նարեկացի, Ներսես Լամբրոնացի,

- բ. Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Եղիշե, Ս. Եզնիկ Կողբացի, Ս. Մովսես Խորենացի, Ս. Կորյուն, Ս. Դավիթ Անհաղթ, Ղազար Փարպեցի, Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսես Դ. Շնորհալի,
- գ. Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Եղիշե, Ս. Եզնիկ Կողբացի, Ս. Մովսես Խորենացի, Ս. Կորյուն, Ս. Դավիթ Անհաղթ, Փավստոս Բուզանդ, Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսես Դ. Շնորհալի:

15.2.

(1 միավոր)

- ա. Ս. Սահակ Ա. Պարթև, Ս. Հովսեփ Ա. Հողոցմեցի, Ս. Գյուտ Ա. Արահեզացի, Ս. Հովհաննես Ա. Մանդակունի, Ս. Հովհաննես Գ. Օձնեցի, Ս. Ներսես Դ. Շնորհալի, Ս. Մովսես Գ. Տաթևացի,
- բ. Ս. Սահակ Ա. Պարթև, Ս. Հովսեփ Ա. Հողոցմեցի, Ս. Գյուտ Ա. Արահեզացի, Ս. Հովհաննես Ա. Մանդակունի, Ս. Հովհաննես Գ. Օձնեցի, Գրիգոր Բ. Վկայասեր, Ս. Մովսես Գ. Տաթևացի,
- գ. Ս. Սահակ Ա. Պարթև, Ս. Հովսեփ Ա. Հողոցմեցի, Ս. Գյուտ Ա. Արահեզացի, Ներսես Գ. Տաթևացի, Ս. Հովհաննես Գ. Օձնեցի, Ս. Ներսես Դ. Շնորհալի, Ս. Մովսես Գ. Տաթևացի:

15.3.

(1 միավոր)

- ա. Դավիթ Թոռնիկյան, Զաքարիա Գ., Ստեփանոս Դ. Տղա,
- բ. Դավիթ Թոռնիկյան, Զաքարիա Գ., Ստեփանոս Ե. Սալմաստեցի,
- գ. Դավիթ Թոռնիկյան, Գրիգոր Դ. Տղա, Ստեփանոս Դ. Տղա:

№ 16

Նկար-առաջադրանք՝ կազմված երկու հարցից:

(8 X 0,25=2 միավոր)

16. ա. Ի՞նչ ուսումնական հաստատություններ են պատկերված:

բ. Ե՞րբ են հիմնադրվել:

1.



2.



3.



4.



1. ա. _____ Բ. _____
2. ա. _____ Բ. _____
3. ա. _____ Բ. _____
4. ա. _____ Բ. _____

№ 17
Շարադրանք

(2 միավոր)

1. Ներկայացրե՛ք Ապաշխարության խորհրդի իմաստը և կարգը:
2. Ներկայացրե՛ք Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսի հոգևոր-մշակութային գործունեությունը:
3. Ներկայացրե՛ք Խրիմյան Հայրիկի ազգանվեր գործունեությունը: Ո՞րն է «Երկաթե շերեփի» խորհուրդը:
4. Ներկայացրե՛ք, թե ու՞մ առաջ է պատասխանատու անհատը իր գործած արարքների համար: